ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5508-Ա « 10 » նոյեմբերի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՓԱՐԻԶ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Ա. Բեգոյանի 3.11.2026 թվականի Ն/74475-26 գրությունը, Aquatique Show International-ի նախագահ և գործադիր տնօրեն Դոմինիկ Ֆորմիալսի հրավերը՝ Հանրապետության հրապարակի շատրվանների համապարփակ վերանորոգման և նոր մշտական շատրվանային շոուի ստեղծման հարցերը քննարկելու նպատակով.

1. Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը գործուղել Ֆրանսիայի Հանրապետության մայրաքաղաք Փարիզ՝ հետևյալ կազմով.

1) 2026 թվականի նոյեմբերի 18-ից 21-ը՝

Լուսինե Դայան	Երևանի քաղաքապետի խորհրդական

2) 2026 թվականի նոյեմբերի 18-ից 22-ը՝

Արման Անդրիասյան	Երևանի քաղաքապետի խորհրդական
Գոշ Սարգսյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետ
Արմեն Բեգոյան	«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն

2. Ընդունել ի գիտության, որ Երևանի քաղաքապետի խորհրդականներ Լուսինե Դայանի և Արման Անդրիասյանի, Երևանի քաղաքապետարանի մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին, իսկ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Արմեն Բեգոյանի գործուղման հետ կապված բոլորը ծախսերն իրականացվելու է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանի բացակայության ընթացքում մշակույթի և տուրիզմի վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության մշակույթի բաժնի պետ Արաքսի Խոյլունցին:

4. «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Արմեն Բեգոյանի բացակայության ընթացքում՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել ՀՈԱԿ-ի ֆինանսական գծով տնօրենի տեղակալ Արթուր Սարգսյանին:

5. Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ